

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները  
ևս չի'ն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
ւոր համաձայնութեամբ :

Բարձր - Ներ - Խմբագրութեան  
ԵՂԻՔԻ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՔՆՈՍ

Տարեկան գր. ողջ 30

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Տարեկան փրակ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍՏՆԵՐՈՒ փոխարէն  
վճարուած գրեթէ պիտի ըլլան :

—\*—

Թի՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ  
վերաբերեալ նիւթական խնդրոց համար  
պիտի է յիշել համագործակցական հասցեով  
քերթիս Մասախարախի, որ է՛

ԳԵՈՐԳ ԳՈՒԳԱՔԵԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներ ուղղակի պատասխանա-  
տու են իրենց զրածներու

ZUSC 20 ՓԱՄՈՆ ՈՂՁ

ՍԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԲԱՏ ՆԱՄԱԿ

ԳՈՅՈՒՆՆԱՆ ԳԵՐԱՊՈՅՄԱՌԻՆ

«Արշալոյս» ի Խմբագրութիւնը  
իր 10 Ապրիլ Ուրբաթ օրուան նիւ-  
տին մէջ նկատողութեան առնելով  
թերթին բոլոր ընթացիկ գործերուն  
նկատմամբ մի առ մի Խմբագրու-  
թեան անդամոց հաւանութիւնը  
առնուելու առթիւ առաջացած դժ-  
ուարութիւնները՝ և գլխաւորապէս  
ժամանակի կորուստը, իր կողմէ այդ-  
կարգի գործերու վարչութեան և սը-  
նօրինութեան համար՝ Լիազոր ներ-  
կայացուցիչ կը նշանակէ իր Գար-  
տուղարը, Տիար Եղիշէ Թորոսեան,  
որուն լրագրական գործերու մէջ  
ամբարած հմտութիւնը շատ մը փոր-  
ձերով հաստատեց իր եռամսեայ գոր-  
ծունէութեան միջոցին :

Թոյլ տուէ՛ք, Գերապայծառ  
Հայր, որ իբր հայախօս ու քիչ  
մըն ալ Տարայ էլ կիսնէսի մեր կը-  
րօնակից եղբայրները կատարելապէս  
հայացած տեսնելու ամենէն աւելի  
նախանձախնդիրներէն մէկը, իմ  
կարգին խանդավառ շնորհաբո-  
ւթիւններս բերեմ Ձեր բարի գալըստ-  
եանը առթիւ :

Կուզէի այս պարտքը կատա-  
րած ըլլալ աւելի կանուխէն, բուն  
իսկ Ձեր Արհիպատուութեան Գա-  
հրէ ժամանելուն օրը, բայց մը  
տածեցի թէ անփափկանկատութիւն  
մը, և՛ թերեւ՝ անխղճութիւն գոր-  
ծած պիտի ըլլայի վրդովել ուղիւ  
Ձեր հանգստաւէտութիւնը, այնպիսի  
օր մը՝ որ արդէն յսգնած ըլլալու  
էիք, և նոր աշխարհ մը - այն ալ  
Փարաւոններու երկիրը - տեսնելու  
հմայքոտ ապաւորութիւնը ունէիք,  
և երբ աչէն ու ձախէն, խոնկի և  
զոհաբանութեանց հոգեպարար մթ-  
նոլորտի մը մէջ, կը լսէիք ոչ նուազ  
հաճելի, ոչ նուազ հեշտօրօք ու  
ղերձներ, որոնք միայն թերեւս լե-  
զուններու նոր Բարեկոնի մանրանկարը  
արթնցուցին Ձեր քով ալ. և այս  
ամենուն մէջ իմ ձայնը պիտի լը-  
սեցնէր խաղաղ սաղմոսերգութիւն  
մը, ճշմարտութիւններ անկեղծօրէն  
ու համարձակօրէն ըսուած, այլա-  
պէս օգտակար ու անպատշաճ այդ-  
պիսի հանդիսաւոր օրուան մը հա-  
մար, այլապէս կենդանօք բայց  
բիշա իր անսեթեթ մերկութեա-  
նը մէջ, ու դառնահամ, ու լեղի :

Մահամբձ հիւանդներ շատ  
անգամ սիրով չեն ընդունիր այլ  
լեղի դեղեր, որոնք թէպէտ ղե-  
րենք գէպի կեանք հրաւիրելու բը-  
նոյթը ունենան :

Հաւատացէ՛ք, Գերապայծառ  
Հայր, որ անհամբեր կապակէիք  
Ձեր գալտեանը, մանաւանդ հա-  
յախօս դատակարգը, և այս ան-  
համբերութիւնը անեցաւ մեր քով  
այն օրը որ՝ ամիսներ առաջ՝ Ձեր  
մէկ հոգեշունչ հովուական թուղ-  
թը կարգալու քաղցր պատահու-  
թիւնը ունեցանք : Տարակոյս չունիմ

որ ողջախոհ հաւատացեալները - այ-  
սօր դժբաղդաբար շատ ցանցառ-ան-  
գամ մ'եւս պիտի ընդունին, թէ՛  
«հոգի առաւել է քան զմարմին»,  
և եւս պիտի աւելցնէի այստեղ - հոգ  
չէ թէ այս զգացումը յետագիմա-  
սիրութեամբ որակուի անկրօն մար-  
դիկներու կողմէ - թէ՛ այսօր աւելի  
քան երբէք, պէտք է շանալ քրիս-  
տոնէական մաքուր հաւատքը ամ-  
րացնել անբարոյացած, ամեն տե-  
սակ մոլութիւններով տրոմաթաթա-  
ու անունով միայն քրիստոնեայ  
մարդկանց քով : Ձեմ ուզեր ըսել  
թէ մարդկութիւնը պէտք է որ եր-  
թայ դէպի ետ՝ անցեալ դարերուն,  
որոնց յատկանշանական առաւելու-  
թիւնները եղան նախապաշարած,  
կրօնամոլութիւն, կրօնական կռիւ,  
կրօնական հալածանք, ու կրօնքի  
անուճով՝ ամեն տեսակ վայրագու-  
թիւններ, որոնք բնաւ չեն համա-  
պատասխաներ Մեծ Վարդապետին  
երկնային վարդապետութեանց :

Բայց եթէ մարդկութիւնը անց-  
եալ կըր դարերուն մէջ տառապած  
է կրօնական մոլեռանդութենէն,  
այսօր այդ մարդկութիւնը կը տա-  
ռապի սանձարձակ ազատախոհու-  
թեան մը երեսէն, իրեն սկզբունք  
ունենալով լոկ մարմնաւոր բարոյա-  
կանը՝ որուն հիմը միշտ խախուտ  
պիտի մնայ որչափ ատեն որ անոր  
միացած չըլլայ քրիստոնէականը,  
որուն պակասին աղետաբեր հետե-  
ւանքն է, այսօր, գերտնագարչիւ-  
թապաշտութիւն, մարդկանց քով  
ամեն դիմով կեանքը վայելելու ան-  
զուսպ տենչէ, երեւալու պճնասի-  
րութիւնը, ամուսնալուծութիւննե-  
րու անվերջ շարքը, ազատ կենակ-  
ցութիւնը և եղբայրասպանութիւն-  
ները, մեր մէջ... Մարդը, կըսէ  
Փռանսուա Գոփէ, իր փորձառու-  
թեամբը համոզուած ու երկար ա-  
տեն ազատախոհ ապրելէն յետոյ,  
մարդը, առանց ո և է կրօնքի, կը  
նմանի ապերասան անասունի մը :  
Երբ հաւատքը դոյութիւն չունի ա-  
նոր հոգեւոյն մէջ՝ կարելի չէ որ այն  
մարդը սայթալքուի մտքով չի հան-  
դիպի : և յետոյ, ո՛վ կըցած է  
թափանցել անձանթիւն խորախոր-  
հուրդ գաղտնիքները և ի՞նչ չափ  
անտեսել անձանթիւն, որ յաւիտե-  
նական ու երկնականէսն է, յայսմ

աշխարհեան վազանցուկ կեանքին  
համար, փուճ և հոյիտ արտասուաց :  
Բայց հոգին սիրելով, հոգիին  
փարեւով՝ մարդ պէտք չէ որ ան-  
տեսէ մարմինը, այսինքն՝ մարդ-  
կութիւնը, Հայրենիք, Ազգ և Լե-  
զու, մինչև այն օրը՝ որ ամբողջ  
մարդկութիւնը դառնայ մի եղբայր,  
մի հօտ և մի հովիւ :

Եւ այս մտածումով շատ բա-  
րեբախտ էք դուք, Գերապայծառ  
Հայր, որ Ձեր հօտը հովուելու կու-  
գաք այնպիսի օր մը որ այդ հօտը  
սկսած է կենդանութեան նշաններ  
ցոյց տալ : Ի՞նչ խեղճութիւն էր  
որ կը տեսնուէր այդ հօտին քով,  
դեռ երկու տարի առաջ : Եկեղեցի  
մը քաղաքին ամենազոտ փողոց-  
ներէն միտն մէջ, Առաջնորդարան  
մը՝ գրեթէ աղքատ ու իր խեղճ  
վիճակին մէջ թողուած, հասարա-  
կութիւն մը՝ որ «Հայ - Գաթոլիկ»  
անունով կը յորժրըւի բայց հայ  
ըսուելու համար՝ իրեն քով կը պակ-  
սի հայութեան զգացումը, հայրե-  
նիքի սէրը, լեզուն, որ հիմն է աղ-  
գութեան մը ինքնապահպանման :

Դուք որ, Գերապայծառ Հայր,  
հայ ծնած էք, հայախօս էք և կը  
հաւատամ թէ հայասէր էք, սիրտ-  
խառնուրդ մը չէ՞ք զգար Ձեր հօ-  
տին խորթութիւնը և Բարեկոնեան  
լեզունները տեսնելով :

Մոլորեալ ոչխարներ, աւա՛ղ...  
Մանր է ուրեմն Ձեր լուծը, ու  
ըրովհետև դիւրին բան չէ տարինե-  
րու դրօշմը կողմ արմատացած չա-  
րիքները աւել մաքրել կամքի մէկ  
ժեւքով : Բայց լաւ է անագան քան  
երբէք, և ուրախ եղէք որ այսօր  
Ձեր շուրջը կը գտնէք աշխարհա-  
կաններէ կազմուած Աղբային Երես-  
փոխանական Ժողով մը, ինչ որ կը  
պակսէր ասկէ առաջ, Աղբատախը-  
նամ Ընկերութիւն մը, որ պահա-  
պան հրեշտակ և պատուար մը  
պիտի ըլլայ մեր աղբատները օտա-  
րանալուն դէմ, և հայախօս գի-  
տակից Մասրաֆներ, որոնք կամու-  
վին թե և թիկունք պիտի ըլլան  
Ձեզի, որմէ շատ բան կապատենք և  
Ձեր գործերովն է որ կուզենք դա-  
տել, սիրել ու գնահատել Ձեզ :

Կոյս հոգ մըն է Եզրիպտական  
թիւմը ուր Ձեզի համար շատ բան  
կայ ընելու, և ուր անմահ անուն  
մը Ձեզի վերապահուած է :

ԽՄԲ.

Կը պահանջենք Ձեռնէ նոր եկեղեցի մը, Հայաստանայ եկեղեցւոյ դրօշմ և հարապատերազմութիւն:

Վարժարան կուզենք Ձեռնէ՝ ուր մեր նորահաս մանկտին կարենայ հասկնալ թէ իրենք ի՞նչ են:

Մի՛ մոռնաք նաև յիշեցնել մեր շնորհալի վարդապետներուն, որ պատարագասացութիւններն հանդարտ ու յստակալուր ընեն, Արարերէն և Լատիներէն չի խորհին ու հայերէն չի կարգան, որովհետև կարգացածին ո՛չ Լատիներէն է և ո՛չ ալ Արարերէն:

Եկեղեցւոյ բովանդատ հաճեցէք յաճախ յիշեցնել մեր մոլորեալ եղբայրներուն թէ՛ իրենց նախահայրերը հայ էին, թէ՛ մարդ մը առանց Հայրենիքի, Ազգութեան և սեփական Լեզուի՝ ողորմելի և արգահատելի արարած մըն է:

Ինչպէս հոգին՝ նոյնպէս և մարմինը ունի իր պահանջները:

Եւ այս հաւատքով յառա՛յ, Գերապայծառ Հայր:

Եւ Աստուած ըլլա՛յ Ձեզի օգնական:

Ս. Օ.

Ձեզնոց

Ի ստորև կը հրատարակենք Լատինացի ըստած անձին Լոնտրոնէն ուղղած նամակը, որուն համար նախորդ թուով խոստում ըրած էինք արդէն:

Թերթիս Խմբագրութիւնը առաջին և վերջին անգամը ըլլալով կը հրատարակէ այս կարգի նամակ մը՝ որ իր գծած ուղղութեան չի համապատասխաներ: Կը յիշեցնէ նամակագրին և բարեկամներուն Արշալոյսի անցնալ թուով այդ անձին ըրած դիմումին Խմբագրութեան կողմէ տրուած պատասխանները:

Խմբագրութիւնը սոյն նամակը կը հրատարակէ առանց ո՛ր և է պատասխանատուութիւն ստանձնելու, և առանց անոր պարունակութեան համարի գտնուելու, այլ լոկ իբրև 80գիւնան մը, ինչպէս ըրած էր մեր գերազնի բարեկամներէն «Բըրօկրէ»:

«Արշալոյս» այժմէն իսկ կը խոստանայ հրատարակել Տիար Միջբան Տամատեանի պաշտպանողականը, եթէ նա ուզէ պատասխանել յետագայ գրութեան:

ԲԱՅ ՆԱՍԱԿ

Առ Պ. Մ. Տամատեանի Գրասիրէ

Հեռաւոր և տարտամ մէկ արձագանքը կը հասնի ինձի այն Փիլիպեան ճառերուն, որոնց շանթի

ըր ատեն մը Բարթող Բաշային դէմ կ'արձակէիք, և զորս ներկայիս ուղղած էք Ձեր երեկուայ գործակիցներուն դէմ:

Ի՞նչ ըսել և ի՞նչ ընել կուզէք: Գեռ չի յագեցած անուանարկումի և քինախնդրութեան այդ պատկէն, և չէ՞ք կրնար գործ մը դատապարտել՝ առանց պատիւներ աղարտելու կամ առանց ձեռք սալու: Ձեր երեկուան թշնամիներուն: Երկար ատեն ձայն հանող չեղաւ Ձեզի, յոյս կար որ ինքնիրենիդ զգաստութեան պիտի դայիք և Ձեր ընթացքին վրէժնաները պիտի զգայիք: Բայց, ինչպէս կ'իմանամ, այսօր աւելի քան երբէք Ձեր փառքը կը փնտրուէք լլղճելուն մէջ ինչ որ ձերինը չէ, վատահամբաւելուն մէջ ո՞վ որ Ձեզի չի հետևիր:

Մտիկ ըրէք սակայն վայրկեան մը: Եթէ իրօք այսօր կուսակցական — յեղափոխական պարագլուխ մըն էք, և Ձեր գործունէութեան բաժինը բերել կուզէք Տաճկահայ աղատագրութեան գործին, եթէ այսօր Հայ Յեղ. Կուսակցութիւն մը կը ներկայացնէք ու իբր այն կը խօսիք, կը հարցնեմ Ձեզի թէ ի՞նչ պէտք ունիք շարունակ ցելստտելու և անարդելու ուրիշները, այսինքն անոնք որ Ձեզի չեն հետևիր: Անոնք թող երկման իրենց ճամբէն, Գուք դացէք ձեր ճամբէն: Տաճկահայ ժողովուրդի դատը այնքան բազմապահանջ ու բազմակողմանի է որ, ո՛չ թէ մէկ, այլ եթէ տասնեակ նոր կուսակցութիւններ ալ կազմուին, ամենուն համար գործ կայ, աշխատանք կայ: Ո՞վ Ձեզի կարգիլէ յառաջ երթալ Ձեր նախագծած ծրագրով կամ գործունէութեան եղանակով, և ի՞նչ պէտք ունիք ատելալու շանթեր արձակելու անոնց դէմ որոնք Ձեր ծրագրին չեն յարիք:

Ատեն մը եղաւ երբ մեզի գործակցեցաք Ազգ. քանդակի Մահմադարական պայքարը մղելու համար գլուխ դրին ծրագրի շինեցինք, թե թեի աշխատեցանք, ոտք ոտքի վազեցինք, յոգնեցանք, ու մեզի հետ աշխատեցան նաև ուրիշ շատեր, զորս այսօր չէք խղճահարիր «Գըրամալորթ» «Սճրագործ» «Հրէշ» կամ նման օրինակ բառերով սրակելու: Ե՞րբ եղան անոնք այս աճականներուն արժանի: Կը յիշէք անշուշտ, որ Սերիկ Ունճեան սպաննուած էր, ու Եղիպատի կամ Ամերիկայի հայ հարուստները դրամապահանջ նամակ ստացած էին արդէն, երբ մեզի կը գործակցէիք, մեր հանդէսներուն կը մասնակցէիք, մեր հաւաքատեղիները և խմբագրատունը կ'այցէլէիք և զմեզ Ձեր տունը կ'ընդունէիք: Այն ատեն գըրամալորթ կամ Սճրագործ չէինք, այնպէս չէ՞. բայց ե՞րբ եղանք ուրեմն:

Անոր համար՝ որովհետև Վեր. Կուսակցութիւնէն արտաքսուած կարգ մը մարդիկ հրապարակը լեցուցին ամեն տեսակ աղտոտաբանութիւններով. անոր համար՝ որովհետև Արիւարներ իրենց բռնանմի ի տա-

լանդը գործածեցին Յեղափոխական անձնուրաց գործիչներ աղարտելու, Գուք ալ յայտարար առիթ համարեցիք սուղարեզ իջնելու և հին քինախնդրութիւններ գոհացնելու: Կը մոռնա՞ք սակայն թէ գեռ հազիւ երկու տարի առաջ ի՞նչ բառերով կը դատապարտէիք Արիւարը և բոլոր անոնք որ հակավերակազմեալ պայքարը թխսեցին, կը մոռնա՞ք բոլոր ատենք:

Բայց եթէ ատենք մոռնալու պէտք կը տեսնէք այսօր, կարելի՞ է չը յիշել նաև առաջառու իրողութիւնը թէ Գուք Ձեր խումբին մէջ առիք այն Վերակազմեալները, որոնք ամբողջ մէկ տարի, Գահիրէի Ընդհ. Պատգ. Ժողովին որսմանց հաւատարիմ մնացած էին: Անոնք ալ, անշուշտ, Ձեր խումբին մէջ մտնելէն առաջ զբաղաւոր, սճրագործ, հրէշ մարդիկ էին, բայց անմիջապէս որ Ձեզի յարեցան, եզան ճշմարիտ հայրենասէր, անկեղծ յեղափոխական Կուսակցութիւն է այդ շինածնիդ, թէ չէ՞ բարձր, ուր մտնողը կը մարքուի իր հին աղտերէն:

Ա՛մօթ է, կը հոսկնա՞ք, ա՛մօթ է: Եթէ նոր կուսակցութիւն կուզէք կազմել, եթէ յեղափոխութեան կուզէք պատրաստուիլ, ատիկայ կը՞աք ընել առանց ուրիշները ցելստտելու կամ քարկոծելու, ուրիշները՝ այսինքն Ձեր երեկուան գործակիցները: Եթե՞ աղի չէ՞ յեղափոխական գործը մեռածն է ընել և ամեն առթիւ կրկնել թէ Ձեզի՞ք զատ ուրիշները կապ չունին հայ յեղափոխութեան հետ: Երբէ՞ն ի վեր և ուրի՞ք ստացաք այս մենաշնորհը:

Այլ ինչ որ բոլոր ատենցէ շատ աւելի անբացարկելի կը գտնեմ այն եղբայրական ձեռքն է, զոր կարկառու էք Գահիրէի հակայեղափոխական ու վարձկան զրգուղիներուն, որոնց ցոյց տուած գործունէութիւնը մասնաճիւղի բառով պիտի որսկուէր Տաճկաստանի մէջ և Ձե՞ք խորհիր կոր թէ այն հակայեղափոխական կիստունները, զոր այսօր Ձեր կրակոտ ճառերուն տարթեմաբար կը կենդանացնէք, վաղը զլուխ պիտի բարձրացնեն Ձեզ դէմ ալ, քանի որ անոնց թոյնը ո՛չ թէ այս կամ այն կուսակցականին, այլ բոլոր յեղափոխականներուն յատկացուած է: Ա՛յլ կը մոռնա՞ք այն սճիրը, կամ սճիրներու շարքը, զոր այդ խմբակը առաջագրած էր գործել տալ՝ վարձկաններու ձեռքով: Վերջացնելէ տուալ, սա բարեկամական թելադրութիւնը կուզէի ընել Ձեզի, թէ աշխարհ շատ լայն է, ու ամեն յեղափոխականի առջև գործունէութեան ընդարձակ դաշտ կայ: Պէտք չունիք ուրիշները վատահամբաւելու, Ձեզի տեղ բանալու համար: Գուք դացէք ձեր ճամբէն, և թող ուրիշներն ալ երթան իրենց զիտցած ճամբէն: Եւ թող ապագան ու պատմութիւնը արձանագրեն թէ ո՞վ շուտ և աղէկ հասաւ իր նպատակին:

ԼԵՒՈՆ ԼԱՐՆԵՑ Լոնտրա 4 Ապրիլ 908

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Փատարան Տ. Ս. Փառազանի կողմէ՝ ի պատասխանի թերթիս խմբագրութեան հարցադրոյն, յետագայ արձանագրութեան ընդգրկն յար և նման մէկ օրինակը կը հաղորդուի մեզ ի հրատարակութիւն: ԽՄԲ.

Գահիրէ 30 Մարտ 908

Թուստայ թատերական խումբը առաջնորդութեամբ ծանօթ դերասանուհի Տիկին Սիրանուշի մի քանի ներկայացումներ արքեպի Գահիրէի մէջ, խումբին անկեղծ նպատակաւ կազմուած մասնախումբի խումբը:

Ներկայացումներու բաժանորդագրութեան հաշուակալութիւնը որ յանձնուած էր Պ. Բրուտոսի, Կարգադիր Մասնախումբին կողմէն կատարուեալ են թարկուեցաւ:

Տիար Համբարձում Պէրպէրեան (\*) որ անձնուրբար ստանձնեց հաշիւներու վերաբնութիւնը, հաստատեց 500 դան. երգս. ողջի լաց մը, որուն պարտական մնաց Պ. Բրուտոս հանդէպ Տիկին Սիրանուշի:

Կարգադիր մասնախումբս ցաւ կը յայտնէ որ Պ. Բրուտոս իր վստահութիւնը չտրուար գործածեց իր հպերիւի արարքով՝ ստեղծելով Մասնախումբին անտեղի յոգնութիւններ:

Ստորագրութիւն  
Տոգ. Ե՛ՂՎՈՒՉ  
Ս. ՓԱՓԱՉԵԱՆ  
ՍԵՊՈՒՆ ՊԵՅ ԹԻՒՐՊԵԱՆ

(\*) Մանթ. Խմբ. «Արշալոյս» ի խմբագրութեան դիմումին պատասխանելով՝ Տիար Համբարձում Պերպէրեան քննադատեց իմաստով և վերոյիշեալ արձանագրութեան խմբագր. Պ. Բրուտոսի կը մնայ ինկզիմը պաշտպանել, երբ առկի զօրաւոր փաստեր ունի:

ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈՐԻ

Գահիրէ, Ապրիլի 3 Ապրիլ 1907

Գեր. Տ. Մկրտիչ Մ. Վ. Աղաւունի Առաջնորդ Հայոց Եղիպատի և Նախագահ Պատ. Քաղաքական Ժողովոյ Գաւ. Վարչութեան

Ի Գահիրէ Գերապատիւ Տէր՝

Ներկայէս առաջ՝ իբր նախադասի Պատ. Քաղաք. Ժողովոյ, Հիւանդանոցի Վարչութեան միջոցաւ հետևեալ երեք խնդրագիր-բողոքագիրները զրկած եմ Ձեր գերապատուութեան հասցէին:

1906 Հոկտ. 2 1907 Փետր. 23 և 1907 Մարտ 3 թուակիր, որոց պարտանակութիւնները ներկայ ապահովագրեալ գրութեամբս ալ Ձեզի յիշեցնելու հոգածութիւնը ունենալ զանց չեմ ընել: Առիթն է որ ներառութիւն խնդրելով Ձեզի՞ք փութամ յիշեցնել Ձեր Սրբազնութեան թէ՛ 1906 Հոկտ. 23 էն ստղին, յորում Արթ. Տէր Աւետիս ԲՅՆՅ. Ծաղալեանը զրկած էիք իբր պատգամաւոր Պատ. Քաղ. Ժողովոյ. Անոր պատասխանները բերանացի-արդարեւ գրաւոր կարելի չէին այդ խումբերը (1) . . . Հիւանդանոցի Տնօրինութեան և Ինձ հարողիւ, այլ ևս ց'այսօր ոչ որ երեցու, հակառակի որ 1906 Գեռն. տ. սոյ վերջերս մէկ երկու անձերու միջոցաւ յատկապէս խնդրած ալ էի Ձեզի՞ք որ հրաման տար Արթ. Տէր Մամբրէ ԲՅՆՅ. Վարդանեանի որ անգամ մը ինձ այցելէ՛ իմ մէկ քունի կարեւոր խնդրանքներս Ձեզի մատուցանելու համար որով մեծ յոյս ունէի սպագայ կարգ մը

հաւանական կնճռոտութիւններու առ-  
ջեւը առնել :

Կը ցաւում չա՛տ, որ ձայն բարբա-  
ռոյ յ'անապատի միացին իմ վերոյիշ-  
եալ 'բոլոր դիմունքներս ալ :

Իսկ միւս կողմէ՛ նոյնչափ ցաւով  
կը նկատէի որ իրերայաջորդ կարգ մը  
պաշտօնական գործողութիւններ՝ հա-  
կառակ խղճի եւ ամեն օրինաց, հակա-  
ռակ իմ բողոքներու եւ խնդրանքնե-  
րուս, հակառակ իմ բոլոր ջանքերուս ու  
գիծունքներուս, անսայթակ շարունա-  
կեցին իրենց ապօրինաւոր ընթացքը :  
որոնք չեմ կրնար բռնել թէ՛ պատել պի-  
տի կրնան բերել ազդի մը պաշտօնա-  
տանը, ինչպէս է մեր Ազգ. Առաջնոր-  
դարանը :

Ի մէջ այլոց բողոքաց, օրինակ մը  
միայն յիշեմ այս տեղը : Ներկայ սար-  
ւոյ փետր. ամսոյ մէջ, Առաջնորդարա-  
նէզ պատրաստուած գոյքերուս ցուցա-  
կազուցութիւնները անուղղակի միջոցնե-  
րով ձեռք անցաւ, որոց մէջ յայտնի  
սխալներ եւ միակողմանիութիւններ  
եւայն շնորհիւ, ուստի 1907 Փետր. 17  
թուակիր խնդրագիր մը գրելով Հիւան-  
դանոցի Տնօրինութեան՝ պահանջեցի որ  
իմ կողմէ ըստ օրինի փաստաբան մը  
նշանակուի իրապարտութիւնները օրի-  
նաւորութեան մէջ բերելու համար,  
եթէ անկարելի է որ զիս ազատ ձգէ այս  
ակամայ բանտարկութիւնէն :

Յարգելի Տնօրինութիւնը այդ խնդ-  
րագիրս Ձեզի զրկած ըլլալը անձամբ  
յայտարարեց ինձ, եւ մէկ երկու օր յե-  
տոյ զարմանք տեղեկացայ Տիար Գ.  
Տամկաճեանի թերթի մը լուսանցքին  
վրայ գրած երկուողէն՝ որ Առաջնորդա-  
րանը այդ խնդրագրիս օրինական պա-  
րտականութիւնները առանց ի նկատի  
առնելու, Տնօրինութեան վերադարձու-  
ցած է (2) ատարկելով որ այդ գրու-  
թիւնը իրեն հասցէին զրկած չեմ եւ :  
Այդպէս վարուելու պատճառները բա-  
ցարած եմ Ձեզ 907 Փետր. 23 թուակիր  
նամակիս մէջ :

Այսպիսի առարկելի պատճառաբա-  
նութեան վրայ յիշելով ուրեմն՝ թոյլ  
տուի որ Ձեզի արդէն ծանօթ անձանց  
ունակ հաճելի երեւցած եղանակս պաշ-  
տօնական գործողութիւնները անխնամ  
պայմաններու մէջ շարունակուին, խը-  
նամակայ պարտաւրայ մը պատրաստուելու  
նիւթերը ձեռք բերուելու համար թի-  
րուս : պարտաւրայ՝ որուն բովանդակու-  
թեան հաստատութիւնը վիճելի եւ  
կառավարիչ հոշակելու շատ զօրաւոր  
պատճառներ եւ գրաւոր փաստեր ունիմ  
քովս, իսկ թէ՛ այդ եւ նմանօրինակ  
պարտաւրաներ որո՞ւ եւ ի՞նչ բանի օգտա-  
կար պիտի կրնան ըլլալ՝ շիտակը չեմ  
գիտեր : Այս պարտաւրայ ապագայի լու-  
սաբանութեանց պիտի պարտինք, Փե-  
տրուար ամսոյ վերջերը՝ ծանօթի մը  
միջոցաւ ձեռք անցաւ Ձեր Գերապատու-  
ուութեան 2) 15 փետր. 907 թուակիր եւ  
2538 թուահամար մէկ պաշտօնագրին,  
ուղղեալ առ Ազնիւ տիկին Մաքրուհի  
Ն. Թորոսեան. որով կարգ մը տեղեկու-  
թիւններ կը հաղորդուի նորին Ազնու-  
ութեան :

Այդ պաշտօնագրի ներքին գիտում-  
ներուն եւ անխօստովանելի թագուն  
նպատակներուն վրայ չեմ ծանրանար  
սո այժմ գրութեանս պարունակու-  
թիւնը չի ծանրաբեռնելու համար : սա-  
կայն կը փութամ յայտնել թէ՛ այդ  
պաշտօնագրոյն ի տե՛ս պարտաւորու-  
թիւն զգալի առ Ձեր Գերապատուու-  
թիւն ուղղելի խնդրագրի մը օրինակը  
պատրաստել որ Ձեզ հասցուի, ապագայ  
նիւթական եւ բարոյական նորանոր  
փնտրութեան եւ աննպակցողութեանց  
տեղի չտրուելու համար :

Սոյն խնդրագրի ազանովագրեալ  
զրկուած ըլլալը Ազնիւ Տիկինը գրաւոր  
յայտարարութեամբ ստուգեցի անցեալ  
Մարտ ամսոյ 28 ին. որ ուրիշ տիկին  
մը ընկերակցութեամբ Հիւանդանոց այ-  
ցելել բարեհաճած էր :

Վերջերս սակայն յայտնապէս հաս-  
տատուելով որ զանազաններու կողմէ յո-  
ռի եւ թաքուն նպատակներով իմ խնդ-  
րոյ շուրջ կենդանի կը լարուին, պարտ  
անձին սեպեցի երկազով մը յ'զգուշու-  
թիւն հրաւիրել զնորին ազնուութիւն  
տիկին Մաքրուհի, որ քիչ մը աւելի  
լուրջ եւ շրջահայեաց գտնուի մեքենա-  
յութեանց չ'զոհուելու, պատասխանա-  
տուութիւնները չ'բարդելու եւ չ'բազ-  
մապատկելու, եւ միանգամայն իր եւ  
Ազգ. Առաջնորդարանի արժանապատու-  
ութիւնը խնդրոյ առարկայ չ'զարմնելու  
համար : Այս ըսածներէս մէկ քանիին  
վկայ են Առաջնորդարանից պատճառ-  
գիրը առ Տիար Վահան Մալեգեան  
փաստաբանն ուղղեալ եւ անոր արամազ-  
րութիւնները եւ թելադրանքները եր-  
րորդ անձի մը կողմէ գրաւորապէս ինձ  
հաղորդուած 907 Մարտ 24 թուակիսաւ :

Ահա առ տիկին Մաքրուհի ուղ-  
ղած երկուողիս յար եւ նման ընդօրի-  
նակութիւնը հոս կ'արտագրեմ, որպէս  
զի դուք ալ ի պայտօնէ գրեալ ըլլաք  
անոր բովանդակութեան :

ՊԱՏՃԷՆ  
Ապրիլի 26 Մարտ 1907

« Մաքրուհի » ստորագրուած բողոք  
մը ստացայ. ուրով կարգ մը ինձի վերա-  
բերեալ խնդիրներու նկատմամբ իմ կար-  
ծիս եւ հաւանութիւնս կուզուի :

Այդ բողոքն ո՛ր եւ պատասխան սու-  
րէ առաջ, ինձի որչի հաճելիք Առաջնոր-  
դին գրուած նամակիս մէկ հարազատ օրի-  
նակը եւ քովս յաճելի անկէ - եւ ուր  
մասնէին ստացալիս, ըստ այնմ պատաս-  
խանելու համար :

Առ այժմ հարկ կը հաւանիմ յայ-  
տարարել թէ՛ իմ անձս եւ իրաւանցս վե-  
րաբերեալ բոլոր խնդիրներու համար, իմ  
օրինաւոր հաւանութիւնս եւ անոր հետ  
ստորագրութիւնս չ'պարունակող ո՛ր եւ  
գործողութիւնս եւ ո՛ր եւ քովս, ըլլա՛յ  
պաշտօնական շրջանակներու մէջ, ըլլա՛յ  
Առաջնորդարանի մէջ : ըլլա՛յ այլու՛ր  
բողոքովս ապօրինի եւ անվաւեր կը  
նկատուի :

Ն. ԹՈՐՈՍԵԱՆ

(1) Ծանօթ. - Ն. Թ. - Տէր Եղոյանեան  
906 Հոկ. 2 ի առաջին նամակիս ի պա-  
տասխանի, նոյն ամսոյ 23 ին արաբա-  
գէտ թարգմանչի մը կետ գալով, յա-  
նուն Քաղաք. Թողոլոյ եւ Առաջնորդին  
բարեհարգար . . . զիս կը մատնէր թէ՛  
եմ եղեր :

2. Թէ գրգռիչ հրատարակութիւն-  
ներ կ'ընեմ եղեր . . . Սուլթանին գէմ  
(Շիշմանեան հոգեկոյս Եպիսկոպոսին ձե-  
ռագրները կ'ակնարկէր անշուշտ) :

3. Թէ կ'ընդվզիմ եղեր Ազգ. Իշ-  
խանութեան գէմ եւն. եւն. հետեւաբար  
Ազգ. Վարչութիւնը . . . կը խնդրէ որ  
ինձի հոգ տանին . . . եւ լաւ խնամեն,  
երկարաձգելով ակամամայ բանտարկու-  
թիւնս :

Տէր Եղոյանեան անպատճառ չէր յու-  
սար թէ՛ Սրբիմեան Հայրիկի պէս Ընդ-  
հանրական Հայրապետի մը ծագիկայ  
փիլոսոփ եւ Աւագութեան աստիճանը երբ  
ուղիղ միջոցներով ձեռք չեն բերուի՛ր՝  
այդ փիլոսոփ գործածութեանը ժամա-  
նակ զինքը գիտող բարեպաշտ ժողո-  
վուրդը գայթակղելով՝ ամէն վայրկեան  
բան մը պիտի անցնէ մտքէն . . . :

Եղիշէին հասած անխախտութեանց  
զրկանքները պիտի ըլլան ատոնք. իսկ  
պատմութիւնը՝ իրեն եւ իրենպէսներուն  
համար զրկեալին անողոք ձեռքբերով  
« իրեն մատնութիւնը . . . » պիտի ար-  
ձանուցէ անշնչելի, հաւատարմութեան  
թիւնէն յետոյ . . . :

Արթնցի՛ր, ո՛ր Սրբիմեան, ո՛ր Բարի  
Հայրիկը Հայրերուն, տե՛ս անգամ մը  
թէ՛ քու Ինքնագիր կոնդակով նուի-  
րագործածը Եղիշէն, ի՛նչ հալածանք-  
ներու սահմանուած է, ու անոր տեղ  
զու՛ն անիծէ, անիծէ՛ անսիրտ ու ան-  
խիղճ շարագործները, որպէս զի անոնց  
բոյններուն հիմքերը քանդուին. ու քար  
քար վրայ չի մնա . . . :

Չարմանալու պարագայ մ'ալ, Տէր  
Եղոյանեան այդ քաջալերութիւնը կառ-  
նէք Քաղաքական Թողովէ մը՝ որոնք

քիչ շատ հայ յեղափոխականի անձեռն-  
մխելի անունը կը կրէին, զոր օրինակ.  
Ասում Աւանեսան. Մարտիրոս Ա-  
րիան՝ վարժարանի հաշուոց մէջ ասեթիւ-  
ները փնտաւու չափ ուղղամիտ ժողո-  
վականը. Տօթթ. Բէչէճեան եւ Յարու-  
թիւն Զէպէճեան . . . :

Բայց եթէ հոս վերջանար այս տը-  
նամա - ողբերգա - կատակերգութիւնը՝  
ապահովապէս վեհանձնօրէն եւ ներողա-  
մտաբար պէտք էր վարուել իրենց հան-  
դէպ, եթէ սակայն 907 Ապրիլ 10 ի պաշ-  
տօնական եւ արա-քուրխ անդթութիւն-  
ները չ'գային գրաւոր առաջադ չարաբա-  
րոյութեանց անուրանալի ապացոյցը :

Առաջնորդարանի Արաբերէն գի-  
ւանին 57 համար 10 Ապրիլ թուակիր  
վասերթութիւնը է՝ որ իրաւունք կու-  
տայ ինձի իրենց ձեռնարկի գրոջմե-  
լու ոճրագրութեան անշնչելի խարանդը :

Պ Արփիարին courtier des assassins  
ը այդ թղթով կ'արգարանար : Բայց  
ինչ ըսեմք իրեն՝ Արփիարին ալ՝ որ  
իր կեռ ու խոշոր մատներովը, գրիչովը  
քիթովը, բերանովը, մտքովը ու իր  
գեանածրար հասակովը, տոտիկներէն  
սկսեալ մինչեւ գագաթը՝ եղիշէի մը  
վրայ ի գործ գրուած այս շարոյշակս  
եւ ֆիզիկական ոճրոյն կը մասնակցէր  
ուրիշ իրեն չափ ճարպիկ քիտիներէրի  
մը եւ զեռ ուրիշ գիւրահաւան արբան-  
եակներուն մեղսակցութեամբ, միամիտ-  
ներ որալու համար աներեւակայելի  
եւ անհնարին սուտեր գլորելով՝ վայրա-  
վատին յետեւաբար նշանակուի. զոր-  
պարտանքներ կուտակելով այս ու այն  
եւ մասնաւոր գրիչեալ Եղիշէին հասցէ-  
ին . . . : Հո՛ս էր որ Պ Արփիար ի-  
րեն արժանի մտքի գործակատարին  
հետ արգար մէկէն վրէժ յուճկու առիթ  
գտած էր « Մերովիկ » ին - Շիշմանեան  
Եպիսկոպոսի թղթակցութեանց անունը-  
հետ Հայ Հանդէսովը սկսած պայքարին  
հաշուոյն : Լա՛ւ յսեցէք, Ամեն Մ. Ի . . .  
եւ պարտաւր Ա. Գալանթար եւ բժշ-  
կապետ Բագարատ Նաւասարդեան : Լը-  
սեցէ՛ք թէ՛ ողբացեալ Պ Արփիար ոճ-  
րագործ մ'է միւսերուն ժամանակ . . . :  
Բայց ես ներած եմ իրեն, Հանգի՛ստ  
իր ոսկորներուն :

2. Սոյն խնդրագիրը յետոյ քաղա-  
քիս Վեմ. Կատաղարին զրկուած է.  
խնդրելով որ եթէ կարելի է Մէթր Ժան  
Պրուսայի փաստաբան նշանակուի Կա-  
տաղարութեան կողմէ, եւ ապահովա-  
գրեալ նամակաւ մ'ալ Մէթր Պրուսա  
լի ծանուցուած է այս ողբերգութեան  
մէկ մասը :

ՏԵՂԱԿԱՆ  
ԼՈՐՐ  
ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԸ  
Վարձքերու սղութեան գէմ  
բողոքով վարձակալները քիչ քիչ  
յաջողութեան շաւղին մէջ կը մտնեն :  
Եթէ զուտ քաջալերանք մը ըլ-  
լալու համար չէ, Բրոկրէ անցեալ  
շարթուան թիւերէն մէկուն մէջ կը  
գրէր թէ՛ Տահէրի մէջ կալուածա-  
տէր մը իր սեփականութեանց վար-  
ձագիրը զեղծած է հետեւեալ կեր-  
պով : 300 զրչ, վարձք բերող տու-  
նը 250 ի իլեցուցած է, իսկ 160  
զրչնոցը 140 ի զեղծած :

Այսպէս կը յուսանք որ վերջ  
ի վերջոյ կարգը մեր բնակած տու-  
ներուն կուգայ :

Ա. Զ. Գ. Ա. Տ. Ի. Ն.  
Հ. Բ. Ը. Մ. Ի. Ռ. Թ. Ի. Ն. Ը.  
Հայկական Բարեգործական Ընդ-  
հանուր Միութեան ներկայ 908 ի  
չըջանին մէջ գաւառները զրկած նը-  
պատաներու գումարն է 800 Եգիպ-  
ոսկի : Այս մասին « Արշալոյս » յատ-  
կապէս պիտի խօսի իրեն պէտք ե-  
ղած ծանօթութիւնները ստանալէ  
յետոյ միայն :

ՊԱՏԱՐԱԳ  
Այս կիրակի օր, Լատինական  
Ձատիկի տօներուն առթիւ, տեղւոյս  
հայ հռովմէականաց նորընտիր Ա-  
ռաջնորդ Ար. Տ. Գոյունեան Գերա-  
պայծառ իր անդրանիկ պատարագը  
մատոյց Հայ Հռովմէականաց Տարագ  
էլ Կիւնէնայի եկեղեցւոյն մէջ :

Երկուսու խուռն բաղմութիւն մը  
ներկայ էր արարողութեանց եւ նո-  
րին Արհիպատուութեան ատարժա-  
լուր ձայնը, հանդարտ, յատակ եւ  
հարազատ հայերենի առողմանութիւ-  
նը ներշնչող տպաւորութիւն թողուց  
ներկայ հաւատացեալներուն վրայ :  
Առաջնորդարանի մէջ ալ համ-  
բոյրի պահուն մեծ ողբերգութիւն  
մը կը տիրէր զգալի կերպով :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր  
Հոտ 18 Ապրիլ. - « Լա թու-  
պիւն » կը ծանուցանէ թէ՛ Միջերկ-  
րական Բաղական նաւատորմիցը հը-  
րաման ստացած է Կայսթափ շուրերուն  
մէջ կեղծութեան անհաւանական չէ :  
Հոտ 18 Ապրիլ. - Թուրքիոյ գա-  
նազան կեղծութեան մէջ Բաղական  
նամակատներու հաստատուելու համար  
եղած գիծուսին Բ. զրան կողմէ մեր-  
ժուելը՝ պատճառ տուած է որ Բաղիա  
թուրքական շուրերը երեք նաւաբա-  
ժիններ զրկէ ամեն հաւանականու-  
թեանց հանդէպ պատրաստ գտնուելու  
համար :

Իտալիա Բ. զրան եւ մեծ Տէրու-  
թեարց ծանուցագրի մը պիտի զրկէ,  
թուրքիոյ կողմէ միջազգային իրաւանց  
բռնաբարման դէմ բողոքելու գիտումով  
Հոտ 19 Ապրիլ. - « Լա թուպիւն »  
կ'ըսէ թէ՛ Բաղական նաւատորմիցը  
վաղը պիտի մէկնի զէպի անձանօթ  
նպատակակէտ մը :

Կ. Պոլիս 19 Ապրիլ. - Հէրաքլէի  
հանքեր շահագործող Ֆրանսական ըն-  
կերութեան խնդիրը հետզհետէ կնճռոտ  
կերպարանք կստանայ : Ֆրանսական  
գիտական Բ. զրան մանօթագրած է թէ՛  
Ֆրանսա օրակին 500 ոսկի վնասահա-  
տուցում պիտի պահանջէ, ի բաց առ-  
եալ 14,000,000 Ֆրանգի գումարը՝ որ  
Բ. զրան անտարբերութեան պատճա-  
ռաւ Ֆրանսական ընկերութիւնը վնա-  
սած է : Սուլթանը երէկ ունկնդրու-  
թիւն շնորհեց Պ. Գոնսթանի :

ՍԱՐԵՆ ԶՈՐԵՆ  
ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԸ  
- 0 -  
ԻՐՐՈՆԻԿ  
ԽԻՍՏ ՓՈՒՐԻԿ  
Ա. - Բողոք . . . : Ամեն կողմ բո-  
ղոք : Աղբ բողոք. ձախը բողոք.  
զու՛ն բողոք . . . :  
Բ. - Ի՛նչ աշղղաբի՛ն ալ գիտես ե-  
ղեր. Ձիւնին լսէ նէ ի՛նչ կը յուսաս  
որ մտածէ : Առ ըսածներդ անոր շինած  
երգին « Հայրը ընտիր, մայրը ընտիր  
զու՛ն ընտիր » ին կու՛մանի (՛) քիչի մը :  
Ա. - Ձէ՛ բարեկամ. աշղղ ըլլալու  
պէտքը չկայ այսպէս բռն կտրեանալու  
համար. իրականութիւնները արդէն  
ինձի պերճախօս են : Միւս կողմէ՛ ե-  
ղած այս ամեն բողոքները մէկ մէկու  
քով բերելով նոր բողոքականութիւն  
մը հաստատուելու նպատակ մ'ալ չունին :  
Այսպէս եկաւ գրչիս ու ա՛յսպէս ըսի :  
Տե՛ս. ո՛րչափ բողոքներ կան օգին մէջ :  
Կ. . . : Եանը սակէ շատ առաջ բո-

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՄԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՅ - ԷԼ - ՊՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔՐՈՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ս. - ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԳ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵՍԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վախելու համար, ա՛նէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիէ այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աճանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէն բերով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անմիտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրատորէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ս. - ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԳ

զորքած էր. միայն թէ իր զգացածները տակերէն բառով արտասանած էր. այսինքն՝ փոխանակ կը բողոքեմ ըսելու՝ « բրոթէսթօ իտէրիմ » ըսած էր. որուն զէմ՝ Երեսփոխանացուի մը ակոսներէն վերաբերուած աջ ձեռքովը՝ « Արշալոյս » ի Ս. Օ. ն նոր սկսած է տաք պայքար մը մղել . պայքար՝ որուն « թղթապայքար » անունը պիտի տամ, որովհետեւ հին ժամանակներու մէջ՝ « նոր ժամանակներու » Արևանկարագիր մը թղթապայքար բառը իր խորախորհուրդ գաղտնիքներէն չ'մերկացնելու համար՝ երկար բացատրութեան մը զիմած էր սա՛պէս . Արշալոյս . . . պայքար . . . ու՛ր միացին հին ձիւները . . .

Կը բողոքեմ . . . ամէն անոնք՝ որոնք բողոքելու տեղ մը չ'են կրնար կոր գտնել .

Կը բողոքեմ, կարգ մը մենաշնորհեալներ . . . Սուլթանին ղէմ . . . երբ նիւթականի պապակը գրիտինը շարաշար նեղը կը զնէ .

Բրուտոս Սիրանոյշին ղէմ կը բողոքէ. իսկ Մասնախումբի անգամները « Արշալոյս » ին ղէմ . ուրիշ շատ մը անտիպ բողոքներ ալ կան տակաւին, որոնք հետզհետէ լոյս պիտի տեսնեն .

Ըսողներ կան թէ՛ որ պիտի գայ որ՝ շատ մը մարդիկ ալ ծնած ըլլանուն ղէմ պիտի բողոքեն . . .

Իսկ այս բողոքներուն մէջ ամենէն թարմը. ամենէն հաճելին, ամենէն ուշ մնացածն է, սա վարձակալներուն բողոքը . Տունները սուղ են եղեր. խանութները է՛վէլ է՛վէլօքը սուղ, ու բողոքողներէն շատերը՝ ինծի պէս « հանքերն պարագայիւք » զժողովուրդին կը քաշեն իրենց վարձքերը վճարելու համար . Ատոր ճար ի՛նչ է . ընտանաբար թողուլ ու փախչիլ չ'ըլլար, առաւ փախաւ չ'ըլլալու համար . ուրիշ Ս. Մակար մ'ալ չ'կայ որ՝ մենք ալ անոր անունին տակ ապաստանինք .

Ուրեմն՝ գումարում գումարում վրայ երբեմն ալ մեծ միջոցով հրապարակաւ բողոքելու համար . կը յուսան որ յաջողին .

Թէև բողոքները իրաւացի ըլլան և անուղի թափելը յառաջիկային համարուի ըստ ուսանց .

Բ. - Պիտի հաւատարմի՛ եթէ անցեալ օր պարտեղին մէջ եղած գումարումի մը մէջ հետեւեալ խոսակցութեան ունկնդիր եղած չ'ըլլայի .

Ներկաներէն մին իր քովի ընկեալ ընտելեալ քան մը փոխառաց, որը ինձմէ զատ ուրիշ լսողներ ալ եղան . Փոխառութիւն իմաստը մտաւորապէս սա էր . Անմեղ առաջարկ մը . ա՛յնչափ անմեղ՝ որ Ս. Մակարի « ճգնաւորն » ալ առանց զիտողութեան պիտի վաւերացնէր . . .

Այսինքն պիտի պահանջուէր որ Միթիկը որոշում մը քուէարկէր . 4-5 տարի բնակարանի և խանութի վարձքերուն վճարումը զազրեցնելու համար, մինչեւ որ սա եզրագոտ սի նիւթական տագնապը - Ալաֆրանկա Գրիգը - անցնի . . .

Ա. - Եթէ Մայիկն աէրերը չ'ընդունին . . .

Բ. - Այն ատեն բոլորս ալ միարեւան խանութագուր եւ բնակարանագուր կը հռչակենք, ու կերթանք Գոյնի մէջ կը բնակինք ու գործ կ'ընենք . Գործագուր ընողները երկու հոգի չ'ունին ա՛. չ'ըլլար . . .

Ա. - Հիանալի՛ . . . Ս. Մակարի Շիշը վկայ . . .

### ՄԵՐՍԵՏԷՍ

### Ն Ս Մ Ա Կ Ս Ո Ւ Փ

— 0 —

Գահիրէ Ազն. Տ. Նէվրուզ. - Աւագան Գեղարանի պաշտօնէին միջոցաւ Ձեր ևս դարձուցած թիւ 13 « Արշալոյս » ը նամակատնէն ստացած ենք, զոր ի միամտութիւն Ձեր՝ պարտաւորութիւն կը համարինք ծանուցանել . Աւելի կանուխէն այդպէս վարուած չ'ընելուդ համար կը զարմանանք . Կովկասեան դերասանական խմբի անգամ Պ. Մ. Բրուտոս՝ Ձեր անձին ղէմ ո՛ր և է ակնարկութիւն ըրած չէր սակայն, որչափ կը կարծենք . եթէ այդ է Ձեր մերժումին պատճառը, Բայց կրնա՞ք ըսել մեզի թէ՛ ու՛ր տեղէն իմացաք որ քիչ ատենէն ի Սուտան . . . հանդուցեալ մանկաբարձ Տիկին Սօֆի Ազգապետեանի և անոր յարակից շարք մը . . . գայթակղարի խնդիրներ պիտի յուղուին, զորս չ'ընելու համար՝ այժմէն իսկ ականջնիկ խցել կը փորձէք .

Սակայն մեր ընդունած սովորութիւնը և լրագրական ու խցիկ օրէնքները պարտք կը գնեն մեր վրայ յայտարարել թէ՛ մեր թերթին մէջ երբ ո՛ր և է մէկուս հետին մասէն ակնարկող յօդուած կը հրատարակուի, պարտաւորութիւնն իսկ նոյն իսկ ապահովագրիւթ թերթ մը զրկել այդ անձին կամ անձերուն - եթէ բաժանորդ ալ չ'են - օրպէս զի ինքզինքնին պաշտօններն իրենց յարմար տեսած և ներքին միջոցներով հակառակ պարագային մէջ, Գոյնի կրնայ համարուի գրուածը . Մենք այդ ընդհանուր օրէնքէն բացառութիւն կողմէն չ'ենք կարող, ու երբ վերոյիշեալ խնդիրներով զբաղուի . չ'պիտի ուղենք զձեզ ալ զրկել այդ անհետաքրքրական դալթակողութիւններուն ունկնդիր ըլլալէ՛ եթէ արդէն աւելի աղէկը չէք գիտէր գուք . . .

Այս պարագային մէջ՝ լաւագոյն էր որ չի մերժէիք թերթը, հոգ չէր թէ վճարում ալ ընել չ'ուզէիք, ու մենք ալ պահիկ մը չ'մտածէինք որ Ձեզ նման յառաջիկային անձ մը՝ Մամլոյ և խօսքի աղատութիւնը ո՛ր և է միջոցաւ բնութարարութիւնը կուսակից կրնայ գտնուիլ . Մինչեւ ցարդ ուրիշ թերթ մերժողներ ալ գտնուած են . սակայն ինչպէս հաստատեցիք անուշտ, անոնց մէ և ոչ մէկուսն այսպիսի մեծարանք մը ըրած ենք .

**Մ Ե Ծ Ս Ր Ճ Ա Ր Ա Ն Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն**  
GRAND CAFE ARMENIEN (Le Caire)  
Սոյն Մրճարանը ու Միսան էլ Խաղմէտարի օդատուն հրապարակիկն վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ և ընդարձակութեամբ ճեւակիկն մէջ յարմարագոյններէն մին է հանգստանալու ժամանակ անցնելու .  
Մրճարանը յամախոյններ վերոյիշեալ առաւելորդիներէն զսահուն պիտի գտնեն նաեւ շաւարանի ընկերներ, նոր և ընկեր պիւլարտոներ և անքերի սպասարկութիւն .  
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ  
ՄԻՍԱՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

### Մ Ի Հ Ր Ա Ն Կ Ի Ի Ր Ճ Ե Ա Ն Վ Ա Ճ Ս Ո Ս Կ Ա Ն Գ Ե Ր Չ Ա Կ

Խաղիկ փողոց թիւ 12 Էօլեր եփեմ . Տիկին Վաճառատնէն ետեւի կողմը .

Կը ծանուցանէ արգոյ աղագոյնոց թէ՛ իր վաճառատան մէջ ամեն տեսակ կերպաներ կը գտնուին, ամենէն լաւագոյն, զիմացուէն՝ և ճաշակաւոր ըզգեստները պարտաւորուելու համար . Անկարելի է որ մէկը իրեն զ'մէ և զ'հոգնակողութիւն չ'յայտնէ՛ ձեւաւոր զգեստի մը սիրացած ըլլալը փորձով հաստատելով .

Արեւստին մէջ իր ունեցած հմտութիւնը ամէն տարակոյսէ վեր կը մնայ . երբ ըսուի միայն թէ՛ երկար տարիներ պաշտօն ունեցած է Պոլսոյ նշանաւոր Ֆրանսացի Բալման տանը մէջ . Իր սակիքը զիւրմտաւելի են . այցելեցէք և գու՛ք ալ գոհ պիտի մնաք . 14 - 50

### Վ Ի Ճ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Թ Ի Ն Հ Ա Յ Կ Ա Ն Ա Ն Ձ Ի Ն Ա Ն Ե Ա Ն Ի Ս Ե Ն Լ Ա Գ Ո Ր Ս

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՏԱՐԱՎ ԲԱՆՈՒՄՍ 400 թիւն ընդհանրապէս Թիւրք 5 ԴՐԵ . ՈՂՁ

Մեծ արճարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն անմասն մեծ տարածայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է . անոնք որ սոյն չ'ընդ զարգը ունենալ կը ցանկանան, ժամ առաջ թող զիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ. Գեորգեֆափազեանի՝ մնացեալ սակաւթիւն տոմսերէն զնեւու համար, որոնք անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական արճարանի մէջ կանխաւ ծանուցուելով .

### ԼՈՅՍ ՏԵՍՍԻ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻԿ ՀԱՄԻՏ ԻՆՉՊԷՍ ՄԵՌՍԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԸ ԹԻՒ Յ ԳՐԲՈՅԿԸ

ԳԻՆ ՄԷԿ ՅՐԱՆԻ

Դահլիճէն կրնան դիմել ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանը՝ և Առուարձաններէն Հիւրիակիկն հետեւեալ հասցեով .

M. ARAM  
Grand Café Arménien  
Le Caire - Egypte

### ՏՕՔՔ ԵՍՔԷՐ Լ. ՃԻԲՈՅԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊՈՐ ԲԱՇԱ . ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատ՝ ենթակային առանց ցուպատճառելու .

Մանկաբարձուհի և մասնագէտ կանանց ծննդական գործարաններու և ախրագիտեան աստիճան, իսկ մասնակներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու .

Կատարեալ խնամքով և զիմասկան նորագոյն մեթոտներու շնորհիւ հիւանդացի կը բժշկէ իր խնամեց յանձնուած հիւանդները .

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կես օրէն յետոյ ժամը 2-5

Սահման երեքօրեայ ապահաց ձրի զարմանում .